



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն _____ **Ֆիզիկա** _____

Թեմա Նորեկյան մրցանակի արժանի և արժանացած հայ գիտնականներ _____

Կատարող _____ **Շահինյան Արզիսե Հովհաննեսի** _____
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար _____ **Քնարիկ Հովհաննիսյան** _____
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհում յուրաքանչյուր տարի կատարվում են հետազոտություններ գիտության տարբեր բնագավառներում: Գիտնականները փորձում են գտնել աշխարհում գոյություն ունեցող առեղծվածների պատասխանները: Ըստ իս աշխարհը կատարյալ է և նույնիսկ մեծագույն ջանքերի դեպքում ոչ մեկին չի հաջողվում գտնել այդ առեղծվածների լիարժեք պատասխանը: Եվ ըստ իս այդ հետազոտությունները ի վերջո հանգեցնում են աղետների, քանի որ ըստ հոգևոր մոտեցման այն ինչ ստեղծել է Աստված կատարյալ է և պետք չէ փոփոխության ենթարկել: Սակայն մարդկային հետաքրքրասիրությունը այնքան մեծ է, որ յուրաքանչյուր տարի ունենում ենք մի նոր առեղծվածի պատասխան: Այդ առեղծվածները բացահայտող գիտնականները արժանանում են Նոբելյան մրցանակի՝ ի պատիվ Ալֆրեդ Նոբելի՝ շվեդ քիմիկոս, ինժեներ, գյուտարար, ով ստեղծել է դինամիտը, նա նաև կազմել է կտակ, որի համաձայն սահմանվել է Նոբելյան մրցանակը:

Նոբելյան մրցանակը ամենամյա միջազգային մրցանակների հավաքածու է, որը շնորհվում են շվեդական ու նորվեգական ինստիտուտների կողմից ակադեմիական, մշակութային և գիտական ձեռքբերումների համար: Քիմիայի, գրականության, իսադադության, ֆիզիկայի և ֆիզիոլոգիայի կամ բժշկության բնագավառում Նոբելյան մրցանակներն առաջին անգամ շնորհվել են 1901 թվականին: Նախքան 1980 թվականը մեդալները պատրաստվել են 23 կարատանոց ոսկուց, իսկ դրանից հետո՝ 18 կարատանոց կանաչ ոսկուց, որ ծածկվում է 24 կարատանոց ոսկով: 1901 թվականից մինչև 2016 թվականը Նոբելյան մրցանակներն ու Տնտեսագիտական գիտությունների բնագավառում Ալֆրեդ Նոբելի հիշատակին նվիրված մրցանակը շնորհվել են 579 անգամ 911 մարդու և կազմակերպությունների: Քանի որ ոմանք այդ մրցանակին արժանացել են մեկից ավելի անգամներ, ընդհանուր առմամբ ստացվում է 23 կազմակերպություն և 881 անհատ: Մրցանակների հանձնման արարողություններն անցկացվում են ամեն տարի Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմում : Յուրաքանչյուր մրցանակակիր կամ դափնեկիր ստանում է ոսկե մեդալ, դիպլոմ և գումար, որի չափը որոշվում է Նոբելյան հիմնադրամի կողմից:

Այս հայտնագործությունների բնագավառում կարևոր է նաև մարդկությանը տեղեկատվությամբ ապահովելը: Դա ճիշտ է սկսել հենց դպրոցական տարիքից: Ուսուցչի պարտականությունն է տալ տեղեկատվություն գիտնականների գործունեության, նրանց ձեռքբերումների մասին՝ առավել ևս եթե դա ազգությամբ հայ գիտնական է: Ազգությամբ

հայ գիտնականների ձեռքբերումները ոգեշնչում են հայ մանուկներին և օրինակ են ծառայում իրենց կյանքում բարձունքների հասնելու համար,բարձրացնում է ազգային ոգին: Այդ իսկ պատճառով իմ աշխատության մեջ ես կանրադառնամ հայ գիտնականների ձեռքբերումներին, եթե նույնիսկ դրանք չեն առաջադրվել մրցանակաբաշխությանը:

ԳԼՈՒԽ 1

ՆՈՒՑՆԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ՉԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



Նկ.1 Վիկտոր Համբարձումյան

1.1 ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

Վիկտոր Համբարձումյանը խոշոր աստղաֆիզիկոս է ով գիտնականի փառահեղ կենսագրություն ունի: Նա 1939 թ-ին արժանացել է ԽՍՀՄ Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի կոչման, ՀԽՍՀ, ԽՍՀՄ եւ ՌԴ Պետական մրցանակների, բազմիցս ընտրվել է միջազգային եւ միութենական մի շարք հեղինակավոր խորհուրդների եւ միությունների, ակադեմիաների իսկական եւ պատվավոր անդամ: Վիկտոր Համբարձումյանը ծնվել է 1908 թ-ին Թիֆլիսում: 1924թ-ին ընդունվել է Լենինգրադի մանկավարժական ինստիտուտ, որտեղից 1926 թ-ին տեղափոխվել է տեղի պետական համալսարանի մաթեմատիկամեխանիկական ֆակուլտետը: Համբարձումյանի առաջին իսկ հոդվածներն աչքի են ընկել իրենց գիտական կարևորությամբ ու գրավչությամբ: 1928-ին Ն. Կոզիրեի հետ գերմանական գիտական ամսագրերում տպագրել է 5 հոդված: Իսկ 1929 թ-ին դիֆերենցիալ հավասարումների սեփական արժեքների տեսության մասին նրա հոդվածն անմիջապես կիրառություն է գտել ֆիզիկայում ու մաթեմատիկայում, զանազան հաշվարկներ կատարելու համար: 1930-ին Դ. Իվանենկոյի հետ Համբարձումյանի տպագրած հոդվածում ցույց է տրվել ատոմի միջուկում չեզոք մասնիկի (հետագայում՝ նեյտրոն) պարտադիր

առկայությունը: Դրանից 2 տարի հետո Ջեյմս Չեդվիգը հայտնագործել է նեյտրոնն ու արժանացել Նոբելյան մրցանակի: 1932-ին Համբարձումյանը Լոնդոնի թագավորական ընկերության ամսագրում (Monthly Notices of Royal Astronomical Society) հրատարակել է հոդված, «Գազային միգամածությունների ճառագայթային հավասարակշռության մասին», որը դարձել է գազային միգամածությունների տեսության հիմքը:

1936-ին Համբարձումյանը լուծել է մի գեղեցիկ մաթեմատիկական խնդիր, որն առաջադրել էր անգլիացի հայտնի գիտնական Արթուր Էդինգտոնը: Այդ խնդրի Համբարձումյանի լուծումը նույնպես տպագրվել է «Monthly Notices» ամսագրում, Արթուր Էդինգտոնի ներկայացմամբ, եւ լուրջ հետաքրքրություն առաջացրել: Եվ ամենակարևորն այն է, որ 1979 թ-ին նույնօրինակ խնդրի լուծման համար, արդեն արդի բժշկագիտության ոլորտում, համակարգչային շերտագրության մշակման նպատակով, անգլիացի Գոթֆրիդ Հաունսֆիլդը եւ ամերիկացի Ալան Կորմակը արժանացան Նոբելյան մրցանակի: Ահա արդեն Նոբելյան մրցանակի դափնեկիր Կորմակի խոստովանությունը.

«...Համբարձումյանն այդ լուծումը տվել էր երկու և երեք չափումների համար, նույն կերպ ինչպես Ռադոնը: Ավելին՝ նա վերցրել է աստղերի 3 սպեկտրալ տիպեր, յուրաքանչյուրում 400-500 աստղ և իր տեսական արդյունքներն օգտագործել է ճառագայթային արագությունների բաշխումից տարածական արագությունների բաշխումը ստանալու համար... Դա Ռադոնի ձևափոխության առաջին թվային վերլուծությունն էր, որը հերքում է տարածված կարծիքն այն մասին, որ համակարգչային շերտագրությունն անհնար է առանց համակարգիչների: Այդ հաշվարկի մանրամասերը տրված են Համբարձումյանի հոդվածում, եւ նրանք մտածելու տեղիք են տալիս, որ դեռեւս 1936 թ-ին համակարգչային տեխնիկայով կարելի էր ախտորոշել, օրինակ, ուղեղի ուռուցքը: Շատ կարևոր է թվում, որ Համբարձումյանի թվային մեթոդները կարող էին մեծ օգնություն ցույց տալ բժշկությանը, եթե նրանք կիրառվեին 1936-ին»:

Սա իհարկե ազնվաբարո խոստովանությունն է, բայց... միայն այդքանը:

1943-ին Համբարձումյանն ընտրվել է Հայաստանի նորաստեղծ Գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ եւ տեղափոխվել Հայաստան: Նշանակվել է

համալսարանի աստղադիտարանի տնօրեն, համալսարանում հիմնադրել է աստղագիտության ամբիոն, ձեռնամուխ եղել Հայաստանում աստղագիտության զարգացմանը: 1946-ին Բյուրականում հիմնադրել է աստղադիտարան, որն իր լուրջ բացահայտումներով լայն ճանաչում ստացավ աշխարհում, որպես աստղաֆիզիկայի Բյուրականյան դպրոց:

Համբարձումյանը Բյուրականում շարունակեց իր բեղմնավոր գործունեությունը. Կարևոր աշխատանքներ կատարեց կոսմոգոնիայի, անկայուն աստղերի, գազային միգամածությունների եւ աստղակույտերի դինամիկայի ոլորտում:

Իր լուծած գլխավոր գիտական խնդիրները Համբարձումյանն ինքը համարում է հետևյալը.

- 1.բաց աստղակույտերի քայքայման պատկերացման մշակումը,
- 2.կրկնակի աստղերի քայքայման բացահայտումը,
- 3.գալակտիկայի տարիքի գնահատումը,
- 4.աստղասփյուռների հայտնաբերումը,
- 5.գալակտիկաների միջուկների ակտիվ դերի բացահայտումը :

1947 թ-ից մինչև 1993-ը 1994 թ-ին Համբարձումյանին շնորհվել է Հայաստանի Ազգային հերոսի կոչում, համաշխարհային նշանակության գիտական արժեքների ստեղծման, գիտության բնագավառում մատուցած բացառիկ ծառայությունների և ազգանպաստ հասարակական գործունեության համար:

Մեծ աստղաֆիզիկոսի հիշատակը հավերժացնելու և նրա գիտական ժառանգության զարգացումը խթանելու համար ՀՀ նախագահի հրամանագրով (2009 թ., ապրիլի 16) սահմանվել է Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակ (500.000 ԱՄՆ դոլար մրցանակային դրամագլխով): Մրցանակը շնորհվելու է 2 տարին մեկ անգամ, աստղաֆիզիկայի եւ դրան հարակից բնագավառներում ակնառու գիտական աշխատանքի համար: Վ. Համբարձումյանի անվան մրցանակի առաջին դափնեկիրներ դարձան (2010 թ.) շվեյցարացի աստղաֆիզիկոս Միշել Մայորին եւ նրա գիտական խմբի անդամներ Գարիկ Իսրայելյանն ու Նունո Սանտոսին:

1.2 ԳՈՒՐԳԵՆ ԱՄԿԱՐՅԱՆ



Նկ.2 Գուրգեն Ասկարյան

Հաջորդ հայ Նոբելյան մրցանակակիր կարող էր լինել ֆիզիկոս Գուրգեն Ասկարյանը, որն արտակարգ ընդունակությունների տեր ֆիզիկոս էր՝ ծնված Մոսկվայում՝ դարաբաղցի բժիշկ ծնողների ընտանիքում: Ծնողները շատ էին ուզում իրենց որդուն տեսնել երաժիշտ, բայց նա նախընտրեց ֆիզիկան, ընդունվեց Մոսկվայի պետական համալսարան եւ, թերևս, չսխալվեց:

«Ասկարյանը դեռևս 3-րդ կուրսում շատ կարևոր մի գաղափար հղացավ լիցքավորված մասնիկները գրանցելու վերաբերյալ: Դրա էությունն այն էր, որ արագընթաց լիցքավորված մասնիկը միջավայրով շարժվելիս, նյութի ատոմների հետ փոխազդելով, էներգիա է կորցնում, որն անջատվում է լիցքավորված մասնիկի անցման ուղու երկայնքով: Եվ եթե միջավայրը լինի գերտաք հեղուկ, որն ուր որ է պիտի եռա, ապա եռման համար անհրաժեշտ կլինի շատ փոքր էներգիա: Հենց այդ էներգիան, որն անջատվում է միջավայրի հետ լիցքավորված մասնիկի փոխազդեցության ժամանակ, բավարար է, որպեսզի գերտաք հեղուկը լիցքավորված մասնիկի ճանապարհի երկայնքով եռա: Հետևաբար, մասնիկի անցման ճանապարհի երկայնքով կառաջանա գոլորշու պղպաղակների շղթա, եւ մասնիկի անցման հետքը թափանցիկ միջավայրում կդառնա տեսանելի:

Ասկարյանը ոչ բարդ հաշվարկներով համոզվեց նաև, որ նման սարքը լիովին իրականանալի է: Բայց նա որևէ աջակցություն չստացավ և որևէ բան ձեռնարկել չկարողացավ. մտահղացումը մնաց անկատար: Նա դեռևս գիտական աշխատանքի փորձ չունեի, նույնիսկ չտպագրեց իր այդ մտահաղացումը և բավարարվեց

ընդամենը մի քանի ֆիզիկոսների հետ քննարկելով:

Սակայն մի քանի տարի անց նրա մտահղացած սարք պատրաստվեց. ամերիկացի ֆիզիկոս Դոնալդ Արթուր Գլեզերը, որը նրանից անկախ հանգել էր նույն գաղափարին, նման մի սարք ստեղծեց 1952-ին: Սարքում օգտագործվում էր գերտաք հեղուկ, ինչը նույն սկզբունքով թույլ էր տալիս հետևել լիցքավորված մասնիկների հետքերին: Այդ սարքը կոչվեց պոպջակային խցիկ եւ զգալիորեն ընդլայնեց տարրական մասնիկների դիտարկման ֆիզիկական հնարավորությունները, որի համար Դ.Ա. Գլեզերը 1960թ-ին արժանացավ Նոբելյան մրցանակի»:

1.3 ՅՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Նկ.3 Յուրի Հովհաննիսյան



Հիրավի, նա այսօր էլ համարվում է Նոբելյան մրցանակի ամենաիրական թեկնածուներից մեկը: Մասնագետների կարծիքով այդ բանի հավանականությունը շատ ավելի կմեծանա, եթե նա ավարտի նաև 120-րդ տարրի սինթեզը ամերիկացի գիտնականների հետ, և նրա կանխատեսած «կայունության կղզու» վարկածը դառնա ավելի համոզիչ:


Բանն այնն է, որ առաջին արհեստական տարրերի սինթեզի համար Նոբելյան մրցանակ տրվել է դեռեւս 1951 թ-ին՝ ամերիկացի գիտնականներ Գլեն Սիբորգին ու Էդվին Մակմիլլանին: Ավելին, 1997-ին Սիբորգի անունով է (ՏՅ - Սիբորգիում) կոչվել 106-րդ տարրը:

Ուստի գերծանր տարրեր սինթեզելուց բացի, որը սկզբունքորեն կատարվում է նույն տեխնոլոգիայով, անհրաժեշտ է ցույց տալ, որ այդ տարրերն ակնթարթորեն չեն քայքայվում, այլ փոքրիշատե կայուն են՝ կարող են որոշ ժամանակ գոյատևել աշխարհում:

Իսկ այդ ցուցանիշի պատկերը հետևյալն է՝ 117-րդ տարրի կիսատրոհման պարբերությունը (T1/2) վայրկյանի 10-րդ մասի չափ է, 115-րդինը՝ 0.2 վրկ, 113-րդինը՝ 5 վրկ, 111-րդինը՝ 26 վրկ ... 105-րդինը՝ 33 ժամ և այլն: Այդ ճանապարհին զուտ ամերիկյան հակազդեցությունը մեղմելուն թերևս կարող է նպաստել այն, որ 117-րդ տարրի սինթեզը կատարվել է ամերիկյան կենտրոնների (Օքրիջ եւ Լիվերմոր) հետ համագործակցությամբ: Այդ տարրի սինթեզի համար անհրաժեշտ Բերկլիում-249-ի (T 1/2=320 օր) պատրաստուկն ստացվել է ԱՄՆ-ի Օքրիջ ազգային լաբորատորիայում: 2010 թ. ապրիլին ՀՀ ԳԱԱ տարեկան ժողովում Յուրի Հովհաննիսյանը, որպես ակադեմիայի արտասահմանյան անդամ, հանդես եկավ իր աշխատանքների մասին շատ հետաքրքիր զեկուցումով: Նրան, զոնե արտաքուստ, չեն ընկճել Նոբելյան մրցանակի շուրջ հյուսված պատմությունները. մեծ հարգանքով է խոսում Նոբելյան բոլոր մրցանակակիրների մասին: Նա հետաքրքրվել է նաև Հայաստանում ֆիզիկայի զարգացման հեռանկարով գիտություն, որը փառավոր անցյալ ունի մեր երկրում՝ Երևանի ֆիզիկայի ինստիտուտով, Ալիխանյանների համբավով ու Էլեկտրոնային օղակաձև արագացուցիչով... և ներկա փակուղային վիճակով: ՀՀ Կառավարությանը նրա մասնակցությամբ առաջարկված ծրագրով նախատեսում է այն դարձնել ֆիզիկայի ազգային լաբորատորիա (արտասահմանյան մի շարք երկրների օրինակով) և մասնագիտացնել ներկայումս բժշկության մեջ կիրառվող կիսաքայքայման փոքր պարբերություն ունեցող իզոտոպների ստացման ուղղությամբ: Դա, թերևս, ոչ միայն այդ հսկայական հաստատությունը փրկելու, այլև զարգացման նոր, հետաքրքիր ճանապարհ հանելու հեռանկար է: Գիտնականը Երևանի պետական համալսարանի ուսանողներին պատմել է 117-րդ տարրի սինթեզի մանրամասերի մասին, ասել, որ դրա համար պետք է եղել 140 օր: Թերևս նույնքան ժամանակ կպահանջվի նաև 120-րդ տարրի սինթեզի համար:

Այն հարցին, թե հնարավո՞ր է, որ 117-րդ տարրն անվանվի Արմենիում, գիտնականն ասել է, որ չի բացառվում. նման բան եղել է Մարի Կյուրի-Սկլադովսկայայի օրոք, նրա հայտնաբերած տարրն անվանել են պոլոնիում (ի պատիվ նրա հայրենիք Լեհաստանի, երբ ինքը Ռուսաստանի քաղաքացի էր եւ ապրում էր Փարիզում): Իսկ նորահայտ տարրերը մինչև օրս անվանվել են մոլորակների, գիտնականների եւ բնակավայրերի (որտեղ սինթեզվել են) անունով, որը կատարում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի անվանակարգության հանձնաժողովը՝ ԻՅՈՒՊԱԿ-ը:

1.4 ՌԱՅՄՈՆԴ ԴԱՄԱՂՅԱՆ



Նկ.4 Ռայմոնդ Դամաղյան

Այժմ խոսենք ամերիկահայ գիտնական Ռայմոնդ Դամաղյանի մասին, ով գրեթե ամեն ինչ արեց բժշկության մեջ ներկայումս լայն կիրառություն գտած մագնիսառեզոնանսային շերտագրության (ՄՌՇ) հայտնագործման ու զարգացման համար, նաև հրապարակավ վիճարկեց հայտնագործության առաջնությունը, բայց անօգուտ: Նոբելյան կոմիտեն 2003 թ-ի բժշկագիտության բնագավառի մրցանակը շնորհվեց ամերիկացի քիմիկոս դոկտոր Պոլ Քրիստիան Լոտերբուրին և բրիտանացի ֆիզիկոս Պիտեր Մենսֆիլդին:

Ռայմոնդ Դամաղյանը ծնվել է 1936 թ-ին՝ Նյու Յորքի նահանգի Մելվիլ քաղաքում: 1956 թ-ին Վիսկոնսին-Մեդիսոնի համալսարանում ստացել է մաթեմատիկայի բակալավրի, 1960 թ-ին՝ դոկտորի աստիճան՝ Նյու Յորքի Ալբերտ Էնշտեյն բժշկական վարժարանում:

1971-ին, լինելով Հարվարդի համալսարանի ասպիրանտ, Դամաղյանը «Science» ամսագրում հոդված է տպագրել այն մասին, որ օրգանիզմի ուռուցքային և բնական հյուսվածքները տարբեր կերպ են արձագանքում միջուկամագնիսային ռեզոնանսին (ՄՄՌ), և առաջինն է առաջարկել այդ երևույթն օգտագործել քաղցկեղի վաղ ախտորոշման համար: 1974 թ-ին նա առաջինն է ստացել նաև ՄՄՌ շերտագրության՝ չարորակ նորագոյացությունների ախտորոշման նպատակով օգտագործման արտոնագիր: 1978-ին Դամաղյանը կազմակերպել է սեփական ընկերություն (FONAR) և արտադրել ՄՌՇ սկաներներ (տեսածրիչ): Բայց նրա մշակած «կենտրոնացված դաշտային տեխնոլոգիան» ավելի նվազ արդյունավետ

էր, քան Մենսֆիլդի եւ Լոտերբուրի մշակած գրադիէնտային մեթոդը: Մագնիսառեզոնանսային շերտագրության հիմնադրման տարեթիվը, այնուամենայնիվ, համարվում է 1973, երբ պրոֆեսոր Պոլ Լոտերբուրը «Nature» ամսագրում գրել է այդ երևույթի մասին, իսկ հետագայում Պիտեր Մենսֆիլդը մշակել է պատկերների ստացման մաթեմատիկական ալգորիթմները:

Այդուհանդերձ, Ռայմոնդ Դամադյանի անուրանալի ներդրումը հայտնի է գիտական աշխարհին: Բարձր է գնահատվել նրա վաստակը. նա արժանացել է ԱՄՆ-ի Տեխնոլոգիայի բնագավառի ազգային մեդալի, նրա արտադրած առաջին սկաների բնօրինակը՝ «ամբողջ մարմնի համար», տեղադրված է ԱՄՆ-ի Գյուտարարների փառքի ազգային սրահում (Օհայոյի նահանգի Ակրոն քաղաքում): Դամադյանի աշխատանքները ճանաչվել են ԱՄՆ-ի մի շարք նահանգներում, իսկ 2001-ին նա արժանացել է Lemelson-MIT պարգևին՝ որպէս ՄՌՇ սկաների հայտնագործող:

ԳԼՈՒԽ 2

ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՆՈՒԲԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐԸ 2021

2.1.ԱՐՏԵՄ ՓԱԹԱՓՈՒԹՅԱՆ

Եվ հաջորդ նյութը հենց հայի ոգու հզորության մասին է : 2021 թվականի Նոբելյան մրցանակաբաշխությանը ...

Բժշկագիտության ոլորտի Նոբելյան մրցանակի դափնեկիրը մոլեկուլային կենսաբան, նյարդաբան Արտեմ Փաթափությանն է: Բեկումնային համարվող հայտնագործության համար մրցանակը նա կիսում է ֆիզիոլոգիայի պրոֆեսոր Դեյվիդ Ջուլիուսի հետ: Այս գիտնականները Նոբելյան կոմիտեի գնահատմամբ՝ տվել են մարդու օրգանիզմի վերաբերյալ ամենակարևոր հարցերից մեկի պատասխանը՝ «ինչպե՞ս ենք մենք զգում մեր շրջակա միջավայրը»:



Նկ.5 Արտեմ Փաթափության

«Ինչպե՞ս են սկսում գործել նյարդի ազդակները, որ ընկալեն ջերմությունն ու ճնշումը: Այս հարցը լուծվել է այս տարվա Նոբելյան մրցանակի դափնեկիրների կողմից», - հայտարարել է Նոբելյան հանձնաժողովը: Ջերմության և շոշափելիքի ռեցեպտորների վերաբերյալ Փաթափությանի ու Ջուլիուսի հայտնագործությունը մեծապես կնպաստի մի շարք հիվանդությունների, տրավմաների, սուր ու քրոնիկ ցավերի բուժմանը:



Լ.կ 5

Ինքը՝ հայազգի 54-ամյա գիտնականը դեռ տարիներ առաջ այսպես է նկարագրել իր հետազոտությունը. «Մեզ հետաքրքրում է այն, ինչ կոչվում է մեխանիկական զգացողություն, այն է, թե ինչպես են բջիջները ուժի միջոցով զրուցում միմյանց հետ: Սա այն է, ինչ մենք սովոր ենք զգալ՝ մեղմ քամին ձեր թևին կամ մուրճի հարվածը ձեր մատին: Սրանք մեխանիկական ուժեր են, որոնք կարող են վերածվել ազդանշանների, որոնք մենք օգտագործում ենք մեր միջավայրն իմաստավորելու համար: Այսպիսով, մեր հետազոտությունը վերաբերում է ոչ միայն հպմանն ու ցավի զգացողությանը, այլև նյարդագիտությունից դուրս այլ հիվանդություններին և կենսաբանական գործընթացներին: Օրինակ, թե ինչպես ենք մենք զգում արյան ճնշումը, ինչպես ենք զգում ոսկրերի խտությունը և կենսաբանության շատ այլ ասպեկտներ», - ասում է նա:

Փաթափությանը ծնվել է Բեյրութում, այնուհետև Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքում ընտանիքի հետ տեղափոխվել է ԱՄՆ: Այժմ ղեկավարում է կենսաբանական և բժշկական հետազոտություններ իրականացնող SCRIPPS հաստատության «Փաթափության փորձագիտական լաբորատորիան»:

Փաթափությանը 2016-ին Երևանի բժշկական համալսարանում է դասախոսություններ կարդացել: Երևանի պետական բժշկական համալսարանի ռեկտոր Արմեն Մուրադյանը նշել է. «Սա ևս ընդգծում է, որ դրանք հասանելի բարձունքներ են և հասու են յուրաքանչյուրին, ով աշխատասեր է, նախաձեռնող է, պատասխանատու է, ժամանակակից կոմունիկացիաները թույլ են տալիս դա շատ արագ անել, և երիտասարդության համար շատ ոգևորիչ է դա, որ իրենց հայրենակիցը կարողացավ աշխարհին ի ցույց դնել, որ մենք էլ կարող ենք բացահայտել ամենաբարդ մեխանիզմները մոլեկուլյար և ներկայացնել: Շատ ուրախ

եմ, առանձնահատուկ հպարտություն եմ ապրում, որ առաջիններից մեկը հենց այս համալսարանում է ներկայացրել իր աշխատությունը դեռևս 5 տարի առաջ»:

Հայագգի գիտնականը համարում է, որ այժմ կենսաբժշկական հետազոտությունների ոսկե դարաշրջան է: Օրերս մեկ այլ հեղինակավոր մրցանակ ստանալիս շեշտել էր՝ գիտությունը միայն գիտնականների համար չէ, հենց միայն համաճարակը ապացուցեց, որ թե որքան կարևոր է ռացիոնալ գիտական մտածողությունը, ինչպես նաև նոր դեղամիջոցների ստեղծումը: Նոբելյան մրցանակի արժանանալու կապակցությամբ Արտեմ Փաթափությանին շնորհավորական ուղերձ է հղել Հայաստանի նախագահը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բերված բոլոր դեպքերում առաջանում է ցավի զգացողություն՝ չգնահատված, անտեսված լինելու, բայց դա էլ պետք է ծառայի հայ ժողովրդին որպես ուժ, որպեսզի հենց մենք աշխարհին ստիպենք գնահատել մեզ և հաշվի նստել հայ ազգի գիգատների հետ: Եվ մենք ինքներս պետք է մեր սերունդներին ճիշտ մատուցենք մեր պատմությունը, մեր հաղթանակները և նույնիսկ պարտությունները, որոնք նոր հաղթանակի սկիզբ են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նոբելյան մրցանակ

https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%B8%D5%A2%D5%A5%D5%AC%D5%B5%D5%A1%D5%B6_%D5%B4%D6%80%D6%81%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF

2. Հայազգի Արտեմ Փաթափությանը՝ բժշկագիտության ոլորտի Նոբելյան մրցանակակիր(Մարինե Խաչատրյան՝ Ազատություն ռադիոկայան,03.11.2021)

<https://www.azatutyun.am/a/31492452.html>

3. Նոբելյան մրցանակը և մենք...Հայերս (Հեղ. Հովհաննես Այվազյան,03.11.2021)

http://www.anunner.com/news/armenians-about-armenians/%D5%86%D5%88%D4%B2%D4%B5%D4%BC%D5%85%D4%B1%D5%86%D5%84%D5%90%D5%91%D4%B1%D5%86%D4%B1%D4%BF%D4%B8_%D4%B5%D5%8E_%D5%84%D4%B5%D5%86%D5%94..._%D5%80%D4%B1%D5%85%D4%B5%D5%90%D5%8D

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-------|
| Ներածություն..... | 2-3 |
| Գլուխ 1. Նոբելյան մրցանակի համար չառաջադրված հայ գիտնականների աշխատանքներ | 4-12 |
| 1.1 Վիկտոր Համբարձումյան..... | 4-6 |
| 1.2. Գուրգեն Ասկարյան..... | 7-8 |
| 1.3.Յուրի Հովհաննիսյան | 8-9 |
| 1.4.Ռայմոնդ Դամադյան..... | 10-12 |
| Գլուխ2. Առաջին հայ Նոբելյան մրցանակակիրը2021..... | 12-14 |
| 2.1 Արտեմ Փաթափության..... | 12-14 |
| Եզրակացություններ | 15 |
| Օգտագործված գրականության ցանկ | 16 |